# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 26-Ա

<<24>> մայիսի 2023 թվականի քաղաք Մարալիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 14-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հուլիսի 2-ի N 631 որոշմամբ հաստատված <<Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության>> 12-րդ, 14-րդ կետերի, «Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի առաջարկությունը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի կողմից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի հետևյալ անհատական կազմը՝

Հանձնաժողովի նախագահ
Էդգար Սաղաթելյան – Անի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,

Հանձնաժողովի անդամներ
Գևորգ Շաբոյան - Անի համայնքի ղեկավարի խորհրդական,
Աստղիկ Մկրտչյան - Անի համայնքի ղեկավարի օգնական,
Լուսինե Գրիգորյան – Միասնական սոցիալական ծառայության Մարալիկի տարածքային կենտրոնի ավագ սոցիալական աշխատող /համաձայնությամբ/,
Սաթենիկ Սահակյան – Անիի համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ, հոգեբան,

Մանուշակ Մարտիրոսյան - Անիի համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ,

Արմենուհի Այվազյան - <<Կարմիր խաչ>> հասարակական կազմակերպության անդամ /համաձայնությամբ/:

2. Հանձնաժողովի նախագահ Էդգար Սաղաթելյանին.

ա. խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմից նշանակել հանձնաժողովի նախագահի տեղակալ և քարտուղար:

բ. Հանձնաժողովի գործունեությունը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հուլիսի 2-ի N 631 որոշմամբ հաստատված <<Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությամբ>> սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

| | Կողմ-11 | Դեմ – 0 | Ձեռնպահ – 0 |
|---|---|---|---|
| Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ | ---------- | ---------- | ---------- |
| Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | ---------- | ---------- | ---------- |
| Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ | ---------- | ---------- | ---------- |
| Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ | ---------- | ---------- | ---------- |
| Ա. ՇԱԲՈՅԱՆ | ---------- | ---------- | ---------- |
| Հ. ՋԱՏԻԿՅԱՆ | ---------- | ---------- | ---------- |
| Ժ. ԱԼԵՔՅԱՆ | ---------- | ---------- | ---------- |
| Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ | ---------- | ---------- | ---------- |
| Ն. ՍԱՐՈՅԱՆ | ---------- | ---------- | ---------- |
| Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ | ---------- | ---------- | ---------- |
| Մ. ԵՆՈՔՅԱՆ | ---------- | ---------- | ---------- |

**ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<24>> մայիսի 2023 թ.

քաղաք Մարալիկ